

## ԱՄԵՆԱԵՐԱՆԵԼԻՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԸ

Հանդգլած են ու մշտապես լիահույս, որ Նոր տարին նոր հաջողության գրավական է: Այս համոզումն ինձ դեպի կրկնակի հաջողություն, հաղթանակ ու երջանկություն է տանում:

Նույն այդ համոզմամբ դիմավորեցի 2019-ը ու այդպես էր սլացավ հուզուկի իմ ողջ տարին: Հենց հունվարին, ՌԲԻԽԻԻ ԻՎ.Զավախիշվիլու անվան պետական համալսարանի Սոցիալ էլ քաղաքական գիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողս աշխատանքային առաջարկ ստացա Վրաստանի հանրային հեռարձակողի Առաջին ալիքի «Բազմերանգ Վրաստան» նախագծի հայկական հաղորդումների բաժնից: Ինձ համար անակնկալ էր, միաժամանակ շատ պատասխանատու առաջարկ, քանի որ մինչ այդ ուժերս փորձել էի տպագիր մամուլում:

Վրաց լեզվին լիարժեք են տիրապետում: Մայրաքաղաքի հայկական թիվ 104 դպրոցի շրջանավարտ են, մեծացել են Վակեի թաղամասում: Ուստի համարձակ քայլերով հատեցի հեռուստալրագրության շեմն ու աշխատանքի անցա Առաջին ալիք՝ որպես «Բազմերանգ Վրաստան» բաժնի «Գանձարան» հաղորդաշարի վարող, իսկ չորս ամիս անց՝ արդեն նույն ալիքի «Նաշուադեվի» (Կեսօր) վրացական հաղորդման թղթակից: Ի դեպ, շատերն են ասում, որ վրացերենով ռեպորտաժներս շատ ավելի հաջողված են... Ինչեւէ, հաճելի է, երբ քեզ դիտում, խրախուսում եւ կամ առողջ քննադատում են: Դա է՛լ ավելի է խթանում ու որակյալ դարձնում աշխատանքը:

Տարվա հաջորդ հաջողությունս թերես ամենաերանելին էր. կարմիր դիպլոմով ավարտեցի մայր բուհի Սոցիալ էլ քաղաքական գիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնի բակալավրիատը: Իմ այս հաղթանակով ապագա ուսանողներին կցանկանայի ապացուցել, որ անհար ոչինչ չկա: Պետական լեզվի լիարժեք իմացության եւ նպատակասլացության դեպքում ամեն ինչ կատարյալ:

2019թ. ՌԲԻԽԻԻԻ պետական համալսարանի դոցենտ Մախա Տորաձեի օգնությամբ եւ իմ ձեւավորմամբ լույս տեսավ «Հանրային դասախոսությունների շարք» վրացերենով երկհատորյակը, ինչպես նաեւ իմ խմբագրությամբ ուսանողական

չորս եռամսյա պարբերաբեր է «Գզավնիլի» (Ուղերձ) ամսագիրը: Իսկ կարեւորն այն է, որ այդ նախագծերը շարունակելի են, քանի որ այժմ արդեն ուսումնառում են նույն համալսարանի նույն ֆակուլտետի Ջանգվածային լրատվության հոգեբանության եւ հասարակական կապերի բաժնի մագիստրատուրայում, առաջին կուրսի ուսանող են:

Այս տարին կարեւորվեց նաեւ գիտաժողովներին իմ ակտիվ մասնակցությամբ: Մախա Տորաձեի գիտական ղեկավարությամբ, այս տարի ամռանը Երեւանի պետական համալսարանի միջազգային գիտաժողովին ներկայացրեցի հայաստանյան եւ վրաստանյան ՋԼՄ-ներում տարածվող ապատեղեկատվությանը վերաբերող հետազոտություն: Այսօր, սա խոցելի թեմա է, եւ հույս ունեմ, իմ այս ու հետագա անդրադարձերով որեւէ ներդրում ունենալ խնդրի կարգավորման գործում:

Եվ վերջապես, տարվա ամփոփիչ անակնկալը, որի մասին գրեց նաեւ «Վրաստան» թերթը. բոլորովին անսպասելի տեղեկացա, որ ուսանողական թերթերից մեկում հեղինակած իմ «բլոգ» արժանացել է Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետական արժանացրելու ու ղեռ ավելին՝ հաղթել սահմանված մրցույթում:

2020 թվականն իմ տարին է: Հորսկույով Առնետ են: Ուստի սպասումներս եռապատիկ ու քառապատիկ են: Իհարկե, այդ ամենն ինքն իրեն չի գալու, պետք է ինքս պայքարեմ ու հաղթահարեմ: Ամեն մարդ ինքն է գրում իր կյանքը: Իհարկե, ամեն ինչ ըստ ծրագրի իրագործելը դժվար է, բայց ես որոշակի նախագծեր ունեմ ու գնալու եմ դեպի դրանց իրագործում:

ԼԻԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վրաստանի հանրային հեռարձակողի Առաջին ալիքի «Բազմերանգ Վրաստան» նախագծի հայկական հաղորդումների բաժնի թղթակից

## ՀԱՂԹԱՆԱԿ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԵՏԵՎԻՑ...

Այսպես կարելի է արտահայտվել Ախալքալաքի մարզահամալիրի մրցաշարերում հաղթանակած մարզիկների մասին՝ շնորհիվ արժանավույն մարզիչների...



2019 թվականը մեծ վերելքով վավերացվեց Ախալքալաքի մարզահամալիրի մարզիչների եւ մարզիկների ձեռքբերումներով ու նվաճումներով Վրաստանի, Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում: Ամեն տարի ավելանում են մեր շրջանի մարզիկների նվաճումները: Ցանկանում եմ հակիրճ ներկայացնել այս տարվա արդյունքները. 2019թ. Եվրոպայի բռնցքամարտի առաջնությունում մեր մարզիկները բարձր պահեցին Վրաստանի եւ շրջանի պատիվը: Մինչեւ 22 տարեկանների մրցաշարում՝ Իսպանիայում, Արսլուշ Գոմցյանը նվաճեց բրոնզե մեդալ, մեծահասակների Եվրոպայի օլիմպիական խաղերին Բելառուսում, մեր երկու մարզիկները հասան եզրափակչին՝ նվաճելով աշխարհի առաջնության մասնակցելու ուղեգիր: Նրանցից Օթար Երանոսյանը գրավեց 3-րդ մրցանակային տեղը: Վերջինս մասնակցեց նաեւ Ռուսաստանի Եվրոպայի մրցումները քաղաքում անցկացված աշխարհի առաջնությանը:

Նրանց հաղթական քայլերը լրացրեց կրտսեր տարիքի բռնցքամարտիկ Գոռ Այվազյանը՝ դառնալով Եվրոպայի չեմպիոն:

Շատ բռնցքամարտիկներ դարձան տարբեր տարիքային խմբերում եւ մեծահասակների միջազգային մի շարք մրցաշարերի հաղթողներ եւ Վրաստանի առաջնություններում գրավեցին առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը ու պատրաստվում են մասնակցելու 2020թ. Եվրոպայի, աշխարհի առաջնության մրցաշարերի եւ օլիմպիական ամառային խաղերի՝ ուղեգիր ձեռք բերելու համար:

Մարզահամալիրում գործում է նաեւ կիկբոքսինգի, կիպկուշին կարատեի եւ մեր համալիրին կից նաեւ տարբեր խմբեր ըմբշամարտի, լեռնային դահուկային մարզաձեւեր: Նշենք նաեւ մարզահամալիրի կիկբոքսինգի բարձր նվաճումներին. Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում եւ միջազգային մրցաշարերում գրավել են 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը: Մյուս մարզաձեւերում նույնպես ունենք շատ հաղթողներ: Մարզահամալիրում գրանցված են 400-ից ավելի մարզիկներ: Ունենք շատ խոստումնալից մարզիկներ եւ մարզիչներ: Վրաստանի հավաքականում տարեցտարի ավելանում են մեր շրջանի մարզիկների թիվը: Մուհիցիպալիտետի աջակցությամբ հույսով եմ ու վստահ՝ էլի ու էլի կավելանան հաղթանակները տարբեր մարզաձեւերում եւ ուզում եմ շնորհավորել մեր շրջանի բոլոր բնակիչների գալիք Նոր տարին ու մաղթել առողջություն, մեծ ձեռքբերումներ: Եղեք ուժեղ եւ հավատով լցված ու կհասնեք նպատակների:

ԱՏՈՍ ԷԼԻՋԲԱՐՅԱՆ

Ախալքալաքի մարզահամալիրի տնօրեն, Վրաստանի վաստակավոր մարզիչ

## 2020 ԹՎԱԿԱՆԸ ԴԻՄՎՈՐՈՒՄ ԵՍ ԻՄ

### ՆՈՐԱՏԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՈՎ

Ամանոր է... ամենաընտանեկանն ու ջերմ բոլոր տոներից: Այս տարի ինձ համար այն առավել քան առանձնահատուկ է, քանի որ դիմավորելու, իսկ նախորդը ճանապարհելու եմ իմ նորաստեղծ ընտանիքում:

2019-ին, ըստ էության կենտ տարում, մենք մեր ամուսնական զույգը կազմեցինք ու հիմա զույգով գնում ենք դեպի 2020 թվական: Նորը կառանձնանա արդեն մասնագիտականով: Թբիլիսիում ես գտա իմ երկու երջանկությունները, որից մեկը հաստատ ծառայեցնելու եմ ծննդավայրիս: Առանձնաբույժի եւ ծնոտա-դիմային վիրաբույժի մասնագիտությամբ, 2020 թվականին ավարտելու եմ ՌԲԻԽԻԻԻ ԻՎ.Զավախիշվիլու անվան պետական համալսարանի ատամնաբուժություն ֆակուլտետը: Ծնվել, մեծացել եւ միջնակարգ կրթությունս ավարտել եմ Ախալքալաքիում: Ապա «1+4» ծրագրով ընդունվել եմ ՌԲԻԽԻԻԻ ԻՎ.Զավախիշվիլու անվան պետական համալսարան: Հենց այստեղ էլ գտել ոչ միայն գործնական, այլեւ ընտանեկան երջանկությունս: Վիկան՝ կինս, իմ համակուրսեցին է:

Այս տարի Ամանորն անցկացնելու ենք մեր թբիլիսյան բնակարանում, որովհետեւ աշխատանքի բերումով քաղաքից երկար բացակայել ու հարազատ ծննդավայր մեկնել, ցավոք չի ստացվում: Թբիլիսիի Սուրբ Միքայելի անվան կլինիկայում աշխատում եմ որպես ծնուտա-դիմային ռեզիդենտ, իսկ «Ամտել»



կլինիկայում՝ նաեւ բժիշկ-իմպլանտոլոգ եւ ատամնաբույժ: Փորձում եմ գիտելիք քաղել ու մասնագիտական հմտություններն առավելագույնը զարգացնել տեղի բժշկության շրջանում, որպեսզի հետագայում օգտակար լինեն նաեւ իմ ծննդավայրում:

Սամցխե-Ջավախեթի մեր տարածաշրջանում ամանորյա տոնակատարությունները, բնականաբար, ՌԲԻԽԻԻԻ նման հարուստ ու շքեղ չեն, բայց դե շքեղությունն այս պարագայում այդքան էլ էական չէ, Ամանորին կարելու է մարդկային շփումներն ու միմիայն բարեգործությունները, որոնք իրականացնելով կարողություն են մաղթում բոլորիս: Ծնորհավոր Ամանոր, ամենակարեւորը՝ առողջ լինեմք, որպեսզի ամուր քայլերով գնանք դեպի ցանկալի նպատակի վերջնակետ:

ՀԱՐՈՒԹ ԻՐԻՑՅԱՆ

## ԹՈՂ 2020-Ը ԼԻՆԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՏԱՐԻ

Տարեմուտին, սովորաբար, ետադարձ հայացքով գնահատում ենք անցնող տարին: Դրա արդյունքում նկատելի է, որ, վերջին շրջանում, կրթական, մշակութային եւ երիտասարդական կուռ համակարգերից մեկն է դարձել Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի հովանու ներքո գործող ՌԲԻԽԻԻԻ «Հայարտուն» կենտրոնը:

Մշտապես լինելով թեմի առաջնորդի եւ հոգեւորականաց դասի ուշադրության ու հոգածության ներքո՝ կենտրոնը տարեցտարի դառնում է վիրահայ իրականության կրթադաստիարակչական կարեւորագույն օջախներից մեկը: «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի, «Սուրբ Եղիա մարգարե» եւ «Սուրբ Գրիգոր Նարեկացի» մեկօրյա դպրոցների ուսուցիչների ջանքերով, ուսումնական ծրագրին կից, տարվա կտրվածքով, իրականացվում են տասնյակ միջոցառումներ, որոնք ուղղված են՝ Մայր Հայրենիքից դուրս հայ մանուկներին, պատանիներին ու երիտասարդներին հայեցի կրթելուն ու դաստիարակելուն: Մեծագույն ուրախություն է այն փաստը, որ մեր նախակրթարանի երեխաների մեծ մասը դառնում են հայկական դպրոցների սաներ՝ իրենց ձեռքն առնելով մաշտոցյան լույսը վառ պահելու առաքելությունը:

«Հայարտուն» կենտրոնում գործող խմբակների սաները ծանոթանում ու սովորում են մեր ազգային երգերը, պարերը, մասնակցում են տարբեր միջոցառումների, փառատոների՝ Վրաստանում եւ նրա սահմաններից դուրս:

Անցնող տարվա մեծագույն իրադարձությունը բոլորիս համար մեր հանճարների հովանանգ թուփումն էր Կոմի-



տաս Վարդապետի հոբելյաններն էին, որ արժանիորեն նշվեցին նաեւ Վրաստանում: «Հայարտուն» կենտրոնը կազմակերպեց մեր երկու Մեծերին նվիրված մի շարք ծրագրեր՝ ՌԲԻԽԻԻԻԻ եւ տարածաշրջաններում: Մտնում են բոլորիս համար ամենապիբեղի՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան լուսավոր տոները, երբ թե՛ փոքրը, թե՛ մեծը հոգով մանկանում են եւ՛ սպասում ու հավատում հրաշքների: Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհավորել բոլորին՝ այդ տոների կապակցությամբ, մաղթել քաջառողջություն, երջանկություն, սեր եւ ուժեղ կամք: Թող գալիք 2020 թվականը լինի բազում հաջողությունների ու վերելքների, նորանոր ձեռքբերումների ու հաղթանակների տարի: Իսկ հարազատ «Վրաստան» թերթին, որը գալիք տարում կդառնա 100 տարեկան, ցանկանում եմ արգասաբեր հոբելյանական տարի:

ԵՎԳԵՆՅԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի ՌԲԻԽԻԻԻ «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնի ղեկավար





# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՊՅ ԱՆՂԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

**Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սանկտ Պետերբուրգում մասնակցեց ԱՊՅ անդամ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական զագաթաժողովին:**

Հանդիպումը բացեց Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ով ելույթում նշեց, որ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 75-ամյակի տոնակատարությունների աշխատանքների վերաբերյալ պետությունների ղեկավարները համատեղ որոշումներ են կայացրել:

Նիստին մասնակցել են Ղազախստանի, Ղրղզստանի, Ադրբեջանի եւ Բելառուսի ղեկավարները, ԵՏՀ կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Ընդլայնված կազմով նիստին մասնակցեցին նաև Մոլդովայի (ԵԱՏՄ-ում դիտորդի կարգավիճակ ունի) նախագահ Իգոր Դոդոնը, Ղազախստանի նախկին նախագահ, ԵԱՏՄ պատվավոր նախագահ Նուրսուլթան Նազարբաևը:

Ավելի վաղ, վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանը նշել էր, որ Նիկոլ Փաշինյան-Իլիան Ալիև



հանդիպումը նախատեսված չէ, սակայն ԱՊՅ ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպումից հետո կայացավ պաշտոնական ընթրիք, որին մասնակցեցին Հայաստանի վարչապետն ու Ադրբեջանի նախագահը:

Նիստի շրջանակներում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը պարզեցրեց Եվրասիական տնտեսական համաձայնագրի կոլեգիայի նախագահի պաշտոնից հեռացող Տիգրան Սարգսյանին:

## ՎԱՌՎԵՅԻՆ ԵՐԿՐԻ ՉԼԽԱՎՈՐ ՏՈՆԱՄԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ



Դեկտեմբերի 21-ին Երեւանի Հանրապետության հրապարակում վառվեցին գլխավոր տոնածառի լույսերը: Հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանը, պաշտոնատար այլ անձինք, բազմաթիվ քաղաքացիներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՆԸ ԼՍՎԱԳՈՒՅՆ ՄԱՐՉԻՎՆԵՐԸ



Հայաստանի 2019 թվականի «Տարվա 10 լավագույն մարզիկների» անունները հայտնի են: Մարզական լրագրողների, ֆեդերացիաների ներկայացուցիչների եւ SMS քվեարկության արդյունքում 10 լավագույն մարզիկներն են Արթուր Ավետիսյանը, Հովհաննես Բաչկովը, Սլավիկ Գալստյանը, Արթուր Ալեքսանյանը, Ռուբեն Ալեքսանյանը, Տիգրան Կիրակոսյանը, Արսեն Հարությունյանը, Հակոբ Սկրպչյանը, Գոռ Մինասյանը եւ Միսոն Մարտիրոսյանը: Մարզիկների մեծարժան երեկոն կանցկացվի հունվարին: Այս տարի քվեարկությանը մասնակցել է 33 ֆեդերացիայի ներկայացուցիչ, 16 լրագրող:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՏԱՐԻՆ ՓԱԿՈՒՄ ԵՆՔ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԼԱՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ»



Դեկտեմբերի 26-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում անդրադարձավ տարեկան տնտեսական արդյունքներին եւ ընդգծեց, որ տարին փակում

տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 10,1 տոկոս: Շատ կարելի է, որ նույնքան ցուցանիշներով արտահանման աճ ունենք 25,7 տոկոսով, առեւտրի շրջանառությունն աճել է 11,9 տոկո-

սով, ծառայությունների ծավալը՝ 11,6 տոկոսով, շինարարությունը՝ 4,8 տոկոսով»,- ասաց վարչապետը՝ ավելացնելով, որ այս տարվա 11 ամսվա տվյալներով տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7,5 տոկոս, արդյունաբերության աճը՝ 9,3 տոկոս, արտահանման աճը՝ 9 տոկոս:

Սրանք իսկապես բավականին լավ ցուցանիշներ են: Ի վերջո, սրանք արձանագրում են, որ այն զաղափարախոսությունը, որ դրել ենք տնտեսական զարգացման հիմքում, ռեալ աշխատում է Հայաստանի Հանրապետությունում, նկատեց վարչապետը:

ենք բավականին լավ տրամադրությամբ:

- Երեկ վիճակագրության կոմիտեն հրապարակել է նույնքանից էլ 11 ամիսների տնտեսական ցուցանիշները: Պետք է արձանագրել, որ նույնքան տնտեսական հաջողությունների առումով ռեկորդային էր: Նույնքանին

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿՇԻՌ ՄԱՍԸ ՎԱՏԱՅՈՒՄ Ե ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«GALLUP International Association»-ի իրականացված հարցումների մասնակիցների 46.6 տոկոսը լիովին վստահում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին, 38.5 տոկոսն էլ նշել է, որ ավելի շուտ վստահում է:

Այս մասին դեկտեմբերի 23-ին հրավիրված մամուլի ասուլիսում հայտնեց «GALLUP International Association»-ի Հայաստանում լիիրավ անդամ Եմ Փի Ջի ՍՊԸ տնօրեն Արամ Նավասարդյանը:

- Քաղաքացիներին խնդրել ենք գնահատել, թե որքանով են վստահում ներ-

քոշարադրյալներին, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին լիովին վստահում է հարցվածների 46.6 տոկոսը, ավելի շուտ վստահում է 38.5 տոկոսը, իշխանություններին լիովին վստահում է 19.4 տոկոսը, ավելի շուտ վստահում է 38.1 տոկոսը,

խորհրդարանական ընդդիմությանը լիովին վստահում է 7 տոկոսը, ավելի շուտ վստահում է 21.7-ը, իսկ արտախորհրդարանական ընդդիմությանը լիովին վստահում է 5.2 տոկոսը, իսկ ավելի շուտ վստահում է 13. տոկոսը,- ասաց Նավասարդյանը:

Հարցումներն արվել են նույնքանից 9-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հարցումներին մասնակցել է 1517 քաղաքացի:

## ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅԻՆ



Դեկտեմբերի 23-ին Արմեն Մելիքբեկյանը ընտրվեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ: Հաջորդ օրը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ֆեդերացիայի նորընտիր նախագահի հետ: Հանդիպման մեկնարկին նա շնորհավորեց Արմեն Մելիքբեկյանին՝ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում ընտրվելու առիթով:

Նիկոլ Փաշինյանը ընդգծեց, որ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրությունը կարելի է, որովհետեւ կառավարության համար կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում էական է սպորտի ապաքրեականացումը եւ սպորտի ախտազերծումը կոռուպցիայից: Եվ երրորդը, իհարկե, հնարավորությունների զարգացումն է»,- ասաց Հայաստանի վարչապետը:

39-ամյա ՀՀ ՖՖՖ նորընտիր նախագահ Արմեն Մելիքբեկյանը մասնագիտությամբ լրագրող է, գրաքննադատ, բանասիրական գիտությունների թեկնածու, 2005-2008 թվականներին զբաղեցրել է ֆուտբոլի ֆեդերացիայի գործադիր տնօրենի պաշտոնը:

նավարության համար շատ կարելի է երեք պատճառով. «Առաջինն այն է, որ ֆուտբոլի զարգացումը ռազմավարական նշանակություն ունի: Երկրորդը՝ ես կարծում եմ, որ ֆուտ-

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ ՀԱՄԱՐՎԵՅԻՆ ԳԵՐԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՍՈՒ-30 ՍՍ ԻՆՔՆԱԹԻՈՆԵՐՈՎ

Հայաստանի զինված ուժերը համարվեցին բազմաֆունկցիոնալ գերժամանակակից ՍՈՒ-30 ՍՍ կործանիչներով:

Ինքնաթիռների դիմավորման արարողությանը մասնակցելու նպատակով Գյումրի էր մեկնել նաև Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Հա-

յաստանն ավելի վաղ հայտարարել էր, որ Հայաստանը պատրաստվում է ձեռք բերել 1 էսկադրիլիա (12) ՍՈՒ-30 ՍՍ ինքնաթիռ:

## ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՅՍ ԱՐՉԱԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵՑ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Մնացական Մարտիրոսյանը մերժեց Ազգային ժողովի նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի խափանման միջոց կալանավորումը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը՝ անհիմն լինելու պարձառաքանությանը: Մանվել Գրիգորյանը կալանքի տակ է այս տարվա հունվարից, նա մեղադրվում է ապօրինի կերպով զենք-զինամթերք պահելու, ավելի քան 101 միլիոն դրամի գույք յուրացնելու, ավելի քան 1 միլիարդ դրամի հարկերի վճարումից խուսափելու, պետական միջոցների պլելի քան 1 միլիարդ դրամ վաճառելու եւ շորթմամբ 37 միլիոն դրամ արժողությանը գույքի հափշտակությունը կազմակերպելու մեջ:





**ԱՌՆԵՏ** - (1936, 1948, 1960, 1972, 1984, 1996, 2008)



Աս ձեր տարին է, եւ նա, անշուշտ, իր հետքը կընդհի ձեր ճակատագրում: Դուք կլինեք Առնետի սեւեռուն հայացքի տակ: Տարին կբարձրացնի ձեր ինքնարժեքի եւ ինքնագիտակցման զգացումը: Դուք կբացահայտեք, որ ընդունակ եք ցանկացած արարումի, որ կարող եք անել ամեն ինչ: Ձեր հեղինակությունը շրջապատում կբարձրանա եւ ձեզ անպայման կնկատեն: Ինչ խոսք, այս ամենը պետք է ամրագրվեն ձեր կատարած գործերով: Անհատական աճ, ինքնազարգացում, պատասխանատվություն աշխատանքում, ահա թե ինչ է պահանջվում ձեզանից: Ինչ վերաբերում է Առնետին, նա, անկասկած, այդ ամենը կզննահատի: Ծույլ ու անբանեղորի մոտ, ընդհակառակը, բոլոր հաջողությունները կարող են հոսոյ գնդել ու խափանվել: Տարին Առնետին կբերի ոչ միայն հաջողություն... Ձեզ սպասում են նաեւ փորձություններ, որոնցով կստուգվի ձեր հոգու ամրությունը: Եվ միայն ձեր նպատակների ճշմարտացիության եւ ձեր ուղու շիտակության դեպքում տարվա տիրակալ Առնետը կհասնի ձեզ օգնության:

**ՅՈՒՆ** - (1937, 1949, 1961, 1973, 1985, 1997, 2009)



Այս տարի ձեզ համար կկարեւորվի ոչ թե արտաքին, այլ ներքին աշխարհը: Ու եթե դուք տրամադրվեք լուրջ աշխատանքի, ապա, նախելառաջ, փորձեք դա ձեր հոգում իրագործել: Արդյունքը կնկատվի կարիերայում, ուր կլինեն զգալի փոփոխություններ, դուք կստանանք ձեր տաղանդը դրսևորելու շանսեր: Ջանացեք հաճախ մնալ ինքնուրույն ձեզ հետ, առանձնությունը գերադասեք արձուկոտ հավաքներին: Եթե դուք գիտնական կամ գրող եք եւ աշխատում եք կարելոր թեմայի վրա, մի՛ բարձրաձայնեք այդ մասին. կարող են աչքով տալ...

Սեփական ներաշխարհի ավելի լավ հասկանալու համար օգտավետ կլինեն հոգեբույժի, աստղագետի կամ պայծառատեսի հետ խորհրդակցությունները:

**ՎԱՐՐ** - (1938, 1950, 1962, 1974, 1986, 1998, 2010)



Տարին ձեզ կբերի նոր ծանոթություններ, հետաքրքիր մարդկանց հետ հանդիպման լայն հնարավորություններ: Ժամանակն է դուրս գալ ասպարեզ եւ հնարավորինս մերվել նոր կրկնտիվին, շրջապատվել իսկական համախոհներով, սրտանոտ ու հոգեկան մարդկանցով: Առնետը Վարրին խորհուրդ է տալիս ներգրավվել կարիքավոր մարդկանց օգնելու նախագծերի, բարեգործական ակցիաների ու շարժումների: Ծատ կարելոր է մասնակցել հոգեբանական նախագծերի, հաճախել դասընթացների, որտեղ կամակամ կներգրավվեք կրկնտիվ աշխատանքի: Ընդհանուր առմամբ, 2020-ը ձեզ համար մեծ վերափոխման շրջան է, որը բույլ կտա սթափվել, ազատվել հոգեկան անտարբերության վիճակից եւ շունչ ու մարմին տալ ամենաըզմալի երագանքին:

**ՃԱՐՐ (ԿԱՏՈՒ)** - (1939, 1951, 1963, 1975, 1987, 1999)



Ձեզ համար եկել է կարիերայի ասպարեզում բարձունքներ նվաճելու ժամանակը, ընդ որում, որքան շատ, այնքան առավել հաջող կլինի ապագան: Մի՛ վա-

## ԻՆՉ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ ՄԵՉ ԱՌՆԵՏԸ

### ՄՐ՝ ԿԱՏԱՂԵՐԷ ԲԱՐԻ ԱՌՆԵՏԻՆ

խեցեք պատասխանատվությունից, դուք լիովին համապատասխան եք՝ ձեր մասնագիտական ոլորտում ամենաբարձր դիրքերի հավակնելու համար: Եթե ուզում եք սեփական գործ սկսել, համարձակ մեկնարկեք այն, քանի որ տարին իդեալապես հարմար է: Եվ մի՛ ձգտեք անմիջապես մեծ եկամուտների, մտածեք երկարաժամկետ ծրագրի զարգացման մասին: Ու եթե ստանաք պատշաճ առաջարկ որեւէ գործատուից, ապա համաձայնեք, առանց վախենալու դժվարություններից: Կա հավանականություն, որ մոտ ապագայում դառնաք ղեկավար կամ առաջատար մասնագետ: Ընտանեկան գործերը չպետք է դառնան մասնագիտական աճից հրաժարվելու պատճառ:

**ՎԻՇԱՊ** - (1940, 1952, 1964, 1976, 1988, 2000)



Տարին հազեցված է բարձր գաղափարների ու բարձր իդեալների կարտոսով... Դուք կփնտրեք շաներ փոխելու շրջապատող աշխարհը, մոլորակը, մարդկանց: Դուք կարող եք

համարձակ ծրագրել հեռավոր ճանապարհորդություններ, տարբեր մշակույթների, տարբեր ազգերի սովորույթների, կրոնների հետ ծանոթություն: Ձեզանում կարծանա հետաքրքրություն դեպի ճշմարտության փնտրումները, փիլիսոփայությունը, կրոնական գիտությունները, իսկ, ինչպես հայտնի է, եթե կա աշակերտ, ապա կտուվի նաեւ ուսուցիչ: Ձեզ կտրվի նման ուսուցիչ-առաջնորդի հանդիպելու շանս, ով կօգնի ձեզ ձեր կյանքը ավելի վառ, իմաստավորված դարձնել: Դուք կարող եք բարձրակարգ բուհ ընդունվել, նոր մասնագիտական կարիերա սկսել, դիսերտացիա պաշտպանել, ամեն ինչ այս տարի ձեզ հասանելի է: Իսկ նրանք, ովքեր արդեն ունեն բարձրագույն կրթություն, կցանկանան մվիրվել մանկավարժությանը եւ դասավանդմանը:

**ՕՉ** - (1941, 1953, 1965, 1977, 1989, 2001)



Տարին կլինի տագնապալի, լի միստիկայով, դուք ձեզ հաճախ կզգաք վտանգի մեջ, նույնիսկ մահվան ու կյանքի սահմանազրույժում... Բայց այդ ամենը միմիայն պատրանք է,

ոչ մի արհավիրք ու դժբախտություն չի նախատեսվում ձեզ համար: Իրականում դուք պետք է ջանքեր թափեք՝ բոլոր խնդիրները, բոլոր փորձությունները համարձակ ու արիաբար հաղթահարել կարողանալու համար: Վճռականություն ձեռք բերեք, սովորեք ընդունել ինքնուրույն որոշումներ, հրաժարվեք վերջապես, վարդագույն ակնոցներից: Ձեր խնդիրն այժմ այն է, որ կարողանաք ռիսկի դիմել, անդունդ թռչել եւ գոյության գաղտնիքները բացելու կարողության հասնել: Ձեր կյանքի մոտեցումը պետք է դառնա ավելի փիլիսոփայական, դա է տարին ձեզանից պահանջում: 2020-ին, հավանաբար, ունենաք մեծ ծախսեր եւ ցանկալի է, որ դրանք վերահսկվեն ձեր կողմից: Խուսափեք շռայլ ծախսերից:

**ՉԻ** - (1942, 1954, 1966, 1978, 1990, 2002)



Ձեզ համար եկել է ժամանակը ասել՝ «այո» շրջապատող աշխարհին եւ ուրախանալ՝ նրա հետ ունեցած շփումներից: Դուրս եկեք մեկու-

սացումից, վերջ տվեք մարդկանցից թաքնվել: Առնետը, հավանաբար, Ձիուն տալ կյանքի արժանի թեկնածուի հետ հանդիպման շանս, եւ եթե դուք մղվեք լուրջ հարաբերությունների, չեք զղջա, դա կլինի ճիշտ ընտրություն: Առանձնահատուկ հաջողություններ են սպասվում իրավաբանության եւ հոգեբանության ոլորտի ներկայացուցիչներին: Բայց հաղթանակի համը կարող է ծաշակել նաեւ այլ ոլորտի մասնագետը: Բանն այն է, որ հաջողությունը պայմանավորված է նրանով, թե որքանով ուժեղ կլինի գործընկերը, դա հավասարապես վերաբերում է ե՛ւ բիզնեսմենին, ե՛ւ բոլոր նրանց, ովքեր իրենց գործունեությամբ կշփվեն մարդկանց հետ՝ կունենան փոխադարձ բանակցություններ, կստորագրեն կարելոր փաստաթղթեր: Բայց, նկատի ունեցեք, որ գործընկերների կարծիքը չպետք է թերագնահատվի:

**ԱՅԾ** - (1943, 1955, 1967, 1979, 1991, 2003)



Ողջ տարին կանցնի ինտենսիվ ու ջանադիր աշխատանքի պայմաններում: Եկել է գործի մեջ դրսևորվելու ժամանակը: Ի դեպ, ձեր արհեստավարժության հատկանիշները կարող են բացահայտվել ամենահետաքրքիր ու բարդ նախագծերում, անշուշտ, ձեզանից փոխադարձաբար կպահանջվի համապատասխան պատասխանատվության ցուցաբերում: Այո, այդպիսին է օրինակաբար նուրբ, մի՛ մոռացեք, որ առանց պատասխանատվության չկա հաղթանակ: Բայց դուք պարզաճակատ դուրս կգաք: Կա ծառայության մեջ առաջնորդված հավանականություն, դուք կկարողանաք դրսևորել ձեր կազմակերպչական ունակությունները: Մի՛ վախեցեք գործի քանակից, կարելոր է, պարզապես. ճիշտ կազմակերպել աշխատանքը, եւ նա կգործի հոգուտ ձեզ: Եթե ի հայտ գան առողջական խնդիրներ, ապա դա, ավելի շուտ կլինի աշխատանքային քառսի ու խառնաշփոթության հետեւանք: Այդ գործերը կարգի բերելով՝ դուք կբարելավեք նաեւ ինքնագացողությունը:

**ԿԱՂԻԿ** - (1944, 1956, 1968, 1980, 1992, 2004)



Աս ձեր կյանքի ամենավառ եւ ուրախ տարիներից մեկն է լինելու, եւ դա բնական է, քանի որ 2020-ի գլխավոր թեման ձեզ համար սերն ու ստեղծագործությունն են լինելու: Առնետի տարին ձեզ եւ ձեր շրջապատի համար կնշանավորվի շրջապատից զարմացնող ձեր ընդունակությունների բացահայտումով: Դուք հիմա կարող եք յուրացնել այն, ինչի մասին վաղուց երագել եք՝ ֆլեյտա, նկարչություն, կամ պարահյուսության պարեր, ամեն ինչ կհաջողվի: Այս տարի ճակատագիրը բարեհաճ է տրամադրված ձեր հանդեպ, եւ նա, ինչ խոսք, կօգնի նաեւ սիրո հարցում: Հիմա ձեզ պետք են ուժանտիկ հարաբերություններ, ուրախացեք ձեր կողակցի հետ շփվելուց եւ ջանացեք նրա կյանքը լցնել լավատեսությամբ: Իսկ, եթե, ցանկանաք ժռանգ ունենալ, ապա ավելի լավ ժամանակ հազիվ թե գտնեք:

**ԱԵԼՈՐ** - (1945, 1957, 1969, 1981, 1993, 2005)

Այս տարին դուք պետք է մվիրվեք ընտանիքին, տանը եւ դա ամե՛ք՝ առանց խլճի խայթից տանջվելու եւ նեղվելու նրանից,



որ ծառայողական գործերը կհաստ մնացին: Ամեն ինչ իր ժամանակն ունի, ու հիմա կարելորդ սեփական օջախն է: Դուք ուզում եք այն դարձնել ձեր ուզածը, երբ տուն գալիս, լցվեք ուրախությամբ ու խաղաղությամբ: Հաջողությամբ կլուծվեն անշարժ գույքի՝ բնակարանի, ամառանոցի առուվաճառքի, ինչպես նաեւ՝ տան վերանորոգման ու կահույքի գնման խնդիրները: Իսկ, եթե արդեն ունեք հողատարածք, Առնետի տարուն այն դարձրեք մրգատու այգի, որը դեռ երկա՞ր տարիներ կծառայի ձեզ՝ բերելով ուրախություն ու հպարտություն: Եվ մի խորհուրդ էլ՝ 2020-ին, տոների եւ այլ առիթներով, հնարավորինս հաճախակի, ձեր շուրջ հավաքեք հարազատներին ու մերձավորներին, ինչից դուք կվայելեք հոգեկան արժանի փոխհատուցում:

**ՇՈՒՆ** - (1946, 1958, 1970, 1982, 1994, 2006)



Այս տարվա նշանաբանն է՝ «Սովորել, սովորել ու նորից՝ սովորել»: Նոր գիտելիքների պահանջը շատ մեծ է եւ կնախորդի ձեր անելիքներն ու նպատակները: Դուք կուզենաք յուրացնել ոչ միայն ձեզ համար արհեստավարժության նշանակություն ունեցող լրատվությունը, այլեւ հագուրդ տալ ձեր անհագուրդ ինտելեկտին: Դուք հաջողությամբ կարող եք յուրացնել տարբեր լեզուներ, զբաղվել հոգեբանության եւ սոցիոլոգիայի ուսումնասիրությամբ, կարող եք գրել բանաստեղծություններ: Թեկուր ստեղծել սեփական կայք: Եսկանը, այս դեպքում, սեփական մտքերով ու զգացումներով մարդկանց հետ կիսվել է: Նաեւ հիմա շատ կարելոր է շրջապատի հետ շփուրդ իրականացնել՝ ոչ ըստ նրանց պաշտոնի եւ դիրքի տարբերակման. պարզապես հիշեք, որ լրատվության թանկ աղբյուր կարող է դառնալ ձեզ հանդիպած ցանկացած մարդ:

Կուզենաք յուրացնել ոչ միայն ձեզ համար արհեստավարժության նշանակություն ունեցող լրատվությունը, այլեւ հագուրդ տալ ձեր անհագուրդ ինտելեկտին: Դուք հաջողությամբ կարող եք յուրացնել տարբեր լեզուներ, զբաղվել հոգեբանության եւ սոցիոլոգիայի ուսումնասիրությամբ, կարող եք գրել բանաստեղծություններ: Թեկուր ստեղծել սեփական կայք: Եսկանը, այս դեպքում, սեփական մտքերով ու զգացումներով մարդկանց հետ կիսվել է: Նաեւ հիմա շատ կարելոր է շրջապատի հետ շփուրդ իրականացնել՝ ոչ ըստ նրանց պաշտոնի եւ դիրքի տարբերակման. պարզապես հիշեք, որ լրատվության թանկ աղբյուր կարող է դառնալ ձեզ հանդիպած ցանկացած մարդ:

**ԽՈՉ** - (1935, 1947, 1959, 1971, 1983, 1995, 2007)



Գալիք տարուն ձեր խնդիրները կապված են ֆինանսների հետ: Նյութական եկամուտներ, անկասկած, կունենաք, բայց ձեզանից պահանջվում է՝ չծախսել փողը դատարկ, գեղեցիկ, բայցեւ ոչ պետքական առարկաների վրա: Ժամանակն է մտածել փող կուտակելու մասին: Ֆինանսական հաջողությունը կփայտա միայն նրան, ով գիտի փողի գինը եւ չի անի անիմաստ ծախսեր: Այնպես որ, տարվա վերջում, ձեր քսակը պետք է լիքը լինի, ի դեպ, հանգամանքները ձեզ կընդառաջեն այդ ամել:

Տարվա երկրորդ կեսը պետք է մվիրել առողջությանը: Պահպանեք դիետա, զբաղվեք սպորտով, յոգայով, պայքարեք վնասակար սովորությունների դեմ: Առնետը այս հարցերում ձեր օգնականն է: Այս բոլոր գործողությունները ձեզ կներարկեն պոզիտիվ, դրական էներգիա եւ՝ կլցնեն կյանքի ուրախությամբ:

Պատրաստեց  
ՉՈՒԼԵՏՍՐ ԲԱՂԼՅԱՆՆԸ





# 2020-Ը «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՏ



	ՀՈՒՆՎԱՐ				ՓԵՏՐՎԱՐ				ՍԱՐՏ					ԱՊՐԻԼ				ՄԱՅԻՍ					ՀՈՒՆԻՍ							
Երկ.	6	13	20	27	3	10	17	24	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29	8	15	22	29
Երք.	7	14	21	28	4	11	18	25	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30	9	16	23	30
Չրք.	1	8	15	22	29	5	12	19	26	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24	10	17	24	31
Հինգ.	2	9	16	23	30	6	13	20	27	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25	11	18	25	31
Ուրբ.	3	10	17	24	31	7	14	21	28	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26	12	19	26	31
Շաբ.	4	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27	13	20	27	31
Կիր.	5	12	19	26	2	9	16	23	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28				

  

	ՀՈՒՆԻՍ				ՕԳՈՍՏՈՍ					ՍԵՊՏԵՄԲԵՐ					ՀՈԿՏԵՄԲԵՐ					ՆՈՅԵՄԲԵՐ					ԴԵԿՏԵՄԲԵՐ					
Երկ.	6	13	20	27	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28				
Երք.	7	14	21	28	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29				
Չրք.	1	8	15	22	29	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30			
Հինգ.	2	9	16	23	30	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31			
Ուրբ.	3	10	17	24	31	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25				
Շաբ.	4	11	18	25	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26				
Կիր.	5	12	19	26	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27				

**ՀՈՒՆՎԱՐ.** 1, 2 - Նոր տարի, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ջրօրհներ: **ՍԱՐՏ.** 3 - Մայրության օր, 8 - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ** 9 - Վրաստանի ազգային միասնության օր, 17 - Կարմիր ուրբաթ, 19 - Սուրբ Ջատիկ, 20 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՅԻՍ.** 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - Վրաստանի պետական անկախության վերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 28 - Մարիամորա: **ՀՈԿՏԵՄԲԵՐ.** 14 - Մցխեթորա: **ՆՈՅԵՄԲԵՐ.** 23 - Գիորգորա:

Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են: **ՀՈՒՆՎԱՐ.** 5 - Ճրագալույցի տոն, 6 - Սուրբ Ծնունդ եւ Աստվածահայտնության տոն (Սկրտություն), 7 - Հանգուցյալների հիշատակի օր: **ԱՊՐԻԼ.** 10 - Կարմիր ուրբաթ, 12 - Սուրբ Ջատիկ, 13 - Հանգուցյալների հիշատակի օր, 24 - Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: **ՀՈՒՆԻՍ.** 19 - Պայծառակերպություն, 20 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 16 - Վերափոխում, 17 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍԵՊՏԵՄԲԵՐ.** 13 - Խաչվերաց, 14 - Հանգուցյալների հիշատակի օր:

«Վրաստան» թերթի հաջորդ համարը լույս կտեսնի հունվարի 15-ին:

<p>Խմբագիր՝ <b>ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ</b></p>	<p>Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 <a href="http://www.vrastan.ge">www.vrastan.ge</a> E-mail: <a href="mailto:vrastan.press@gmail.com">vrastan.press@gmail.com</a></p>	<p>Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն</p>	<p>“ВРАСТАН” Тбилиси, Грузия «VRASTAN» Georgia, Tbilisi Индекс 66445</p>
--	--	--	--